Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանափնտեսագիտական ֆակուլտետը: 1980-1982 թթ. ծառայել է խորհրդային զինված ուժերում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2023 թթ. դասավանդել է ՀՀ կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է:

Շուրջ երեք տասնյակ գիտական, վերլուծական հոդվածների և 3 մենագրության հեղինակ է:

https://orcid.org/0000-0001-9014-5892

ԲՐԻԿՍ. ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԱՇԽԱՐՀԻ ՆԱԽԵՐԳԱՆՔԸ

DOI: 10.52174/2579-2989_2024.3-96

Քաղաքականությունը հնարավորի գիտություն է:
Օտտո ֆոն Բիսմարկ

Հիմնաբառեր. *ԲՐԻԿՍ, միջկառավարական կազմակերպություն, բազմաբևեռ աշխարհ, համաշխարհային տնտեսություն, տնտեսական անվտանգություն*

ԲՐԻԿՍ-ը պետությունների ոչ պաշտոնական խմբավորում է, որն իր կառուցվածքով համարվում է միջկառավարական կազմակերպություն: Դա, ըստ էության, բազմաբևեռ աշխարհակարգի կողմնակիցների միավորում է, որի հիմնական կրող երկրներն են Բրազիլիան, Ռուսաստանը, Հնդկաստանը, Չինաստանը և Հարավային Աֆրիկան, որոնց անգլերեն անվանումների սկզբնատառերից էլ ձևավորվել է կազմակերպության անունը: Այս երկրների համախմբումը պատահական երևույթ չէ, քանի որ հենց նրանք են 21-րդ դարի սկզբին հայտնվել արագ զարգացողների «առաջնագծում»՝ գիտակցելով, որ այդ միտումների պահպանման պարագայում հնարավոր է դառնալ համաշխարհային տնտեսության գործընթացներում «խաղի կանոնները» թելադրող «խաղացողներ»:

2009 թվականին տեղի ունեցած առաջին գագաթնաժողովում նախաձեռնող երկրները հաստատեցին իրենց հավատարմությունը բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման գործընթացին և կոչ արեցին, որպես ԱՄՆ դոլարին այլընտրանք, ստեղծել նոր համաշխարհային պահուստային արժույթ, որի միջոցով կապահովվի տնտեսական և աշխարհաքաղաքական ավելի մեծ ինտեգրում, ֆինանսական հոսքերի համակարգում ու վերահսկում ինչպես կազմակերպության ներկա, այնպես էլ ապագա անդամ պետությունների միջև:

ԲՐԻԿՍ-ը, սովորաբար, փորձագիտական տիրույթում հասկացվում է որպես աշխարհաքաղաքական հավակնոտ համախումբ ձևավորելու փորձ, որը, ինչոր պահից սկսած, կկարողանա հակակշռել Արևմուտքի այնպիսի ֆինանսական հսկաների, ինչպիսիք են Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) և Համաշխարհային բանկը (ՀԲ):

Սակայն, պետք է հաշվի առնել նաև այն, որ չափազանց հարաբերական է այս մարմինը որպես վերոնշյալ երկրների իրական համախմբված միավոր համարելը, առավել ևս, երբ դիտարկում ենք այդ երկրներից գոնե երեքին (Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան)՝ առաջնորդության ձգտման համատեքստում: Ներկա դրությամբ հնգյակին է միացել ու կազմակերպության լիարժեք անդամ դարձել ևս չորս երկիր՝ Իրանը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Եգիպտոսն ու Եթովպիան, իսկ նման ցանկություն ունեցողների թիվը հասնում է շուրջ 4 տասնյակի, որից առնվազն մեկ տասնյակն անդամակցության գործնական՝ բանակցային փուլում է:

Հոդվածը ճանաչողական բնույթի է՝ տեղավորվելով Հայաստանի տնտեսական անվտանգության դիվերսիֆիկացված քաղաքականություն վարելու տրամաբանության մեջ:

Պատմություն. առաքելություն և նպատակ

BRIC հապավումն առաջին անգամ՝ 2001 թվականին, օգտագործել է ամերիկյան «Goldman Sachs Group» ներդրումային բանկի տնտեսագետ Ջիմ Օ'Նիլը[1], որն այդ անվանման մեջ միավորել է տվյալ ժամանակահատվածում աշխարհի ամենաարագ զարգացող տնտեսություններ ունեցող չորս երկրների՝ Բրազիլիայի, Ռուսաստանի, Հնդկաստանի և Չինաստանի (Brazil, Russia, India, China) անգլերեն սկզբնատառերը՝ կանխատեսելով, որ վերջիններս կարող են համախմբվել և երրորդ հազարամյակի առաջին տասնամյակում հայտ ներկայացնել՝ դառնալու համաշխարհային տնտեսության կարևոր դերակատարները: Օ'Նիլի այս վարկածը դանդաղ, բայց հաստատուն կերպով «միս ու արյուն» ստացավ ինչպես տվյալ երկրների վերնախավի, այնպես էլ համաշխարհային մակարդակի ներդրողների համար:

Ու թեև վերոնշյալ պետությունների աշխարհաքաղաքական դիրքավորումները և հավակնությունները շատ հաճախ չունեին ընդհանուր եզրեր, այդուհանդերձ, այդ երկրները, անկախ իրարից, ունեին մեկ ընդհանուր նպատակ, որն ի զորու էր միավորել նրանց: Այդ նպատակը պայմանավորված էր գործող միաբևեռ աշխարհի նկատմամբ ունեցած ընդգծված բացասական վերաբերմունքով և համաշխարհային տնտեսության զարգացման վերաբերյալ՝ դիրքորոշմամբ: Իսկ սկզբունքային խնդիրը դեպի բազմաբևեռ աշխարհ ինարավորինս անցնցում անցման գործընթացի կազմակերպումն էր: Եվ հենց այս գերակա խնդրի լուծման համար էլ արդեն 2009 թվականին նոր ձևաչափով տեղի ունեցավ վերոնշյալ 4 երկրների առաջնորդների անդրանիկ հանդիպումը Ռուսաստանի Եկատերինբուրգ քաղաքում[2]: Այստեղ էլ քառյակը բարձրաձայնեց իր հիմնական առաքելության մասին՝ կոչ անելով շահագրգիռ երկրներին ծավալել հետևողական, ակտիվ, իրատեսական, բաց և թափանցիկ երկխոսություն և փոխշահավետ համագործակցություն՝ ի նպաստ իրական բազմաբևեռության խթանման ու արդար աշխարհակարգի ստեղծման: Հընթացս նախանշվեց, որ BRIC երկրների միջև երկխոսությունն ու համագործակցությունը պետք է ծառայեն զարգացող երկրների շուկայական տնտեսությունների ընդհանուր շահերին, որտեղ ապահովված կլինի կայուն խաղաղություն և ընդհանուր բարգավաճում: Հանդիպման արդյունքում չորս երկրների առաջնորդների ստորագրությամբ հրապարակված փաստաթղթում ձևակերպվեց BRIC-ի անդամների ընդհանուր տեսլականը համաշխարհային տնտեսությունը ֆինանսատնտեսական ճգնաժամից դուրս բերելու ուղիների վերաբերյալ:

Միջազգային ասպարեզում BRIC-ի հավակնոտ հայտն ուներ ողջամիտ հիմք, քանի որ տվյալ պահին մասնակից պետությունների տնտեսությունները պահպա-

[1] ԱՄՆ-ում գործունեություն ծավալող Goldman Sachs Group-ը աշխարհի խոշորագույն ներդրումային բանկերից է, ֆինանսական կոնգլոմերատ, որը զբաղվում է ներդրումային գործունեությամբ, արժեթղթերի առևտրով, ներդրումների կառավարումով և մատուցում այլ ֆինանսական ծառայություններ:

[2] О неформальном межгосударственном объединении БРИКС, http://brics2015.ru/russia_and_brics/20150301/15574.html

ՆԿԱՐ 1

ԲՐԻԿՍ-ը՝ 2010 թվականին

նում էին կայուն աճի միտում, աչքի էին ընկնում մարդկային և բնական հարուստ պաշարներով, որոնց պարագայում նրանց համախմբումը մեկ ծրագրային նպատակի շուրջ կարող էր էապես կարևորել նորաստեղծ կառույցի դերը՝ օբյեկտիվորեն դա դարձնելով համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկը: Ֆինանսական ճգնաժամի ժամանակահատվածում նման կառույցի ստեղծումը տրամաբանական էր նաև այն առումով, որ դրանից դեռևս 8 տարի առաջ աշխարհի խոշորագույն փորձագիտական դարբնոցում («Goldman Sachs Group») արդեն իսկ կանխատեսվել էր նմանատիպ միավորման հնարավոր ծնունդը:

Մեկ տարի անց՝ 2010 թվականին, քառյակին միացավ Հարավաֆրիկյան Հանրապետությունը (South Africa), որի անվանման սկզբնատառը՝ «S»-ը, ձուլվելով արդեն գոյություն ունեցող BRIC հապավմանը, դա վերածեց BRICS-ի (այսուհետ՝ ԲՐԻԿՍ): Կառույցը համաշխարհային տնտեսության «խաղասեղանի» մոտ սկսեց ներկայանալ որպես միջպետական համագործակցության ոչ ձևական աշխարհաքաղաքական միավորում:

Կառույցն այս ձևաչափով գործեց մոտ 13 տարի՝ կազմակերպելով ամենամյա գագաթնաժողովներ ու ներկայացնելով հաշվետվություններ: Հարկ է նշել, որ հենց գործունեության սկզբում մեծ էր այն երկրների ցանկը, որ ձգտում էին անդամագրվել կառույցին, սակայն հնգյակը, կարծես թե, չէր շտապում ընդլայնել իր կազմը: Այդ գործընթացի դանդաղեցմանն ինչ-որ առումով նպաստեցին նաև Ռուսաստանի աշխարհաքաղաքական նկրտումները, որոնք դրսևորվեցին Ղրիմի միակցմամբ, ապա ռուս-ուկրաինական պատերազմով: Այդուհանդերձ, անգամ այս ձգձգվող հակամարտության պարագայում կառույցին միանալ ցանկացողների թիվը ոչ միայն չի պակասում, այլև շարունակաբար ավելանում է: Նման ակտիվության հիմնական պատճառն այն է, որ, ըստ գործող ձևաչափի, ԲՐԻԿՍ-ին միանալը չի հանգեցնում այլ կառույցների հետ կապերի պարտադիր խզմանը: Իհարկե, չի բացառվում, որ հետագայում կկատարվեն կանոնադրական

ճշգրտումներ այս առումով:

Կառույցին միացողների յուրօրինակ «գույքագրումն» ավարտվեց 2023 թվականի սկզբին, երբ հայտարարվեց, որ բավարարվել է 6 երկրի (Արաբական Միացյալ Էմիրություններ, Արգենտինա, Եգիպտոս, Եթովպիա, Իրան և Սաուդյան Արաբիա) հայտը, և վերջիններս, սկսած 2024 թվականի հունվարի 1-ից, ԲՐԻԿՍ-ի անդամ են:

Միայն երկրների ցանկը հպանցիկ ուսումնասիրելով՝ կարելի է եզրակացնել, որ հնգյակին միացողներից որևէ մեկը «բեռ» չէ կառույցի համար, քանի որ նրանցից յուրաքանչյուրն ավելի շատ բան ունի ԲՐԻԿՍ-ին «տալու», քան «վերցնելու»: Սակայն, ինչպես ասում են՝ «շաբաթն ուրբաթից շուտ եկավ». երկրում իշխանության փոփոխությունից հետո Արգենտինան հայտարարեց ԲՐԻԿՍԻ-ին միանալու իր հայտը հետ վերցնելու մասին: Արդյունքում 2024 թվականի տարեսկզբին կազմակերպությանը միացողների թիվը դարձավ 5:

Խոսուն թվեր

ԲՐԻԿՍ-ի հավակնությունների ու գրավչության հիմնական բաղադրիչն աճող տնտեսական կշիռն է, որի մասին խոսում են թվերը: Աղյուսակ 1-ի 3-րդ սյունակում ԲՐԻԿՍ-ի երկրների 2023 թվականի ՀՆԱ տվյալներն են: Աղյուսակում ընգրկված են նաև 2024 թվականին կառույցին միացող 5 պետության ցուցանիշները՝ ցույց տալու համար, թե ինչ ներուժ ունի կառույցը, և ինչու են ապագային միտված նրա ծրագրերն այդքան հավակնոտ:

Աղյուսակից երևում է, որ տասը երկրի պարագայում ԲՐԻԿՍ-ի ՀՆԱ-ն 2023 թվականին արդեն իսկ մոտեցել է համաշխարհային ՀՆԱ շուրջ 1/3-ին: Հաշվի առնելով ձևավորվող միտումները՝ տեսանելի ապագայում հնարավոր է, որ ոչ ձևական կառույցը սկսի թելադրել քաղաքական ու տնտեսական «խաղի» նորացված կանոններ, որոնց հետ հաշվի չնստելն ուղղակի անհնարին է լինելու:

Միաժամանակ, բավական ազդեցիկ է



ՆԿԱՐ 2

ԲՐԻԿՍ-ի ներկան և ապագայի ուրվանկարը[3]

[3] Visualizing the BRICS Expansion in 4 Charts, https://www.visualcapitalist.com/visualizing-the-brics-expansion-in-4-charts/

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ԲՐԻԿՍ-ի անդամ և թեկնածու երկրների ՀՆԱ համաշխարհային մասաբաժինն ու բնակչության կշիռն ընդհանուրի մեջ (2023 թ.)[4]

Պետություն	Կարգավիճակը 2023 թվականին	ՀՆԱ (միլիարդ ԱՄՆ դոլար)	Մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում (%)	Բնակչությունը 01.04.2024 թ. մլն. մարդ	Բնակչության կշիռն ընդհանուրում (%)
1	2	3	4	5	6
Չինաստան	Անդամ	19,374.00	18.4	1468.7	18.0
Հնդկաստան	Անդամ	3,737.00	3.6	1449.1	17.7
Բրազիլիա	Անդամ	2,081.00	2.0	220.2	2.7
Ռուսաստան	Անդամ	2,063.00	2.0	146.2	1.8
ՀԱՀ	Անդամ	399.00	0.4	61.7	0.8
Սաուդյան Արաբիա	*Թեկնածու*	1,062.00	1.0	38.1	0.5
ԱՄԷ	*Թեկնածու*	499.00	0.5	10.7	0.1
Եգիպտոս	*Թեկնածու*	387.00	0.4	11.2	0.1
Իրան	*Թեկնածու*	368.00	0.4	88.1	1.1
Եթովպիա	*Թեկնածու*	156.00	0.1	126.4	1.55
BRICS Ընդամենը		30,126.00	28.8	3620.4	44.3
Մնացած աշխարհը		74,362.00	71.2	4557.3	55.7

ԲՐԻԿՍ-ի մարդկային ռեսուրսների ցուցանիշը, որը մոտ է երկրագնդի բնակչության գրեթե կեսին: Ինչպես նախանշվել է վերջին գագաթաժողովում, կառույցը միտում ունի աշխարհագրորեն ընդլայնվելու դեպի Հարավ՝ մոտ ապագայում աֆրիկյան մայրցամաքի խոշոր «խաղացողներին» ներգրավելով բազմաբևեռ աշխարհակարգի կառուցման սկզբունքային գործընթացում: ԲՐԻԿՍ-ի՝ դեպի Աֆրիկա մայրցամաք ընդլայնման նպատակները տեսանելի են նկար 2-ում, որից պարզ է դառնում, որ մուտքի «արտոնագրի» են սպասում Ալժիրը, Նիգերիան, Սենեգալն ու Կոնգոն: Թերևս, հենց այս հանգամանքով է պայմանավորված աֆրիկյան մի շարք երկրների անթաքույց տրամադրվածությունը՝ ընդառաջ գնալ Արևելքին, այլ ոչ Արևմուտքին: Աֆրիկյան երկրներից հետ չեն մնում Հարավային Ասիայի՝ տնտեսական աճի կայուն ցուցանիշներ ապահովող երկրները՝ Մալայզիան, Ինդոնեզիան, Թաիլանդը, Վիետնամը: Ակտիվ են ամերիկյան մայրցամաքի որոշ երկրներ՝ Բոլիվիան, Վենեսուելան, Կուբան, Հոնդուրասը: Հայտ են ներկայացրել նաև հետխորհրդային այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ղազախստանն ու Բելառուսը: Ըստ այս պատկերի՝ կարելի է ենթադրել, որ երկրագնդի մակարդակով բոլոր աշխարհամասերում ոչ պակաս կարևոր կշիռ ունեցող մի շարք երկրներ իրենց տնտեսական խոշոր ծրագրերը կապում են ԲՐԻԿՍ-ի հետ, և դրանում կարևոր դեր է խաղում կառույցի կողմից դեռևս կիրառվող «բաց դռների» քաղաքականությունը:

Բայց և այնպես, բրիկսյան «մեդալն» ունի դարձերես. չնայած կառույցի ընդարձակման միտումներին՝ իրերի դրվածքը բոլորովին այլ է Արժույթի միջազգային հիմնադրամում, որտեղ ԲՐԻԿՍ-ի խումբն ունի ձայների ընդամենը 15%-ը: Նման իրավիճակում մեծ է մտավախությունը, որ դեռևս միաբևեռ աշխարհում իշխող ԱՄՆ-ն, որպես «զսպաշապիկ», կարող է կիրառել ԱՄՆ դոլարը, որից կառույցը կախվածություն ունի, և որն այս պահին արդյունավետ կերպով օգտագործվում է Ռուսաստանի դեմ: Ուստի կառույցի ֆինանսական արդյունավետ գործունեությանը խանգարող գործոններից մեկը՝ կախվածությունը ԱՄՆ դոլարից, փորձ է արվում նվազեցնելու հավաքական ուժերով, ինչն էլ թույլ է տալիս ենթադրել, որ կառույցի կողմից իրակա-

[4] Աղյուսակը կազմվել է՝ հիմք ընդունելով հետևյալ աղբյուրները. 3-րդ սյունակ՝ https://www.visualcapitalist.com/visualizing-the-brics-expansion-in-4-charts/#google_vignette, 5-րդ սյունակ՝ https://countrymeters.info/ru/World#google_vignette

նացվող «բաց դռների» քաղաքականությունը մոտ ապագայում դեռևս կմնա անփոփոխ:

Այս դիտանկյունից, արձանագրենք մյուս կարևոր հանգամանքը: Մասնավորապես՝ ինչ-որ բան փոխելու մտադրությունը և դրա իրագործումը կառույցում իրապես տարբեր աստիճանահարթակներում են, քանի որ ԲՐԻԿՍ-ի երկրների մոտեցումները մի շարք հայեցակարգային խնդիրների լուծման առումով էականորեն տարբերվում են: Այսպես՝ Հնդկաստանը, ՀԱՀ-ը, Բրազիլիան, ԱՄԷ-ն, Սաուդյան Արաբիան, Եթովպիան, Եգիպտոսը ձգտում են փոխշահավետ հարաբերություններ պահպանել ինչպես Արևմուտքի, այնպես էլ Չինաստանի ու Ռուսաստանի հետ: Միաժամանակ, արևմտյան գործընկերության ուղիները չափազանց մշուշոտ են այս խմբի հիմնական դերակատարների՝ Ռուսաստանի և Իրանի պարագայում: Այսինքն՝ ծրագրվածից դեպի գործնական իրականացման ճանապարհին առկա են բազում խնդիրներ, որոնք ԲՐԻԿՍ-ի՝ ազատ կամարտահայտման ձևաչափով գործելու պարագայում շատ դժվար է լինելու լուծել միասնական մոտեցմամբ:

Հետևապես՝ առաջանում են մի քանի կարևորագույն հարցադրումներ: Առաջին՝ արդյո՞ք այդ ամենը հնարավորություն կտա ԲՐԻԿՍ-ին դառնալու աշխարհաքաղաքական ու տնտեսական իրական այլընտրանք ԱՄՆ-ին, և արդյո՞ք այդ նպատակին հասնելու համար խմբի անդամ երկրները կգնան ներքին տարաձայնությունները չեզոքացնելու բարդ, սակայն միակ անհրաժեշտ ճանապարհով: Ըստ երևույթին, մոտ ապագայում այս հարցերի լիարժեք պատասխանները չեն տրվի, քանի որ Արևմուտքի և Ռուսաստանի ռազմաքաղաքական առճակատման հանգուցալուծման ժամկետները չափազանց մշուշոտ են, ինչը խանգարիչ գործոն է կառույցի լիարժեք գործունեության համար: Ուստի չափազանց կարևոր է, որ «գույքագրվեն» ԲՐԻԿՍ-ի հիմնական խաղացողների այն առաջնահերթությունները, որոնք նրանց կողմից ներկայացվում են որպես «կարմիր գծեր», և որոնք շատ դեպքերում միմյանց հակադիր են կամ ոչ այնքան համահունչ:

Ինքնին հասկանալի է, որ ԲՐԻԿՍ-ի առաքելության ու դրանից բխող հիմնական նպատակների իրագործման համար անհրաժեշտ է ձեռք բերել ֆինանսական անկախություն Արժույթի միջազգային հիմնադրամից ու Համաշխարհային բանկից, ինչի մասին հայտարարվում է՝ սկսած դեռևս կառույցի հիմնադրման պահից: 2015 թվականին անդամ երկրների նախաձեռնությամբ ստեղծվեց ֆինանսական միջպետական կառույց, որը սկզբնական ժամանակահատվածում կրում էր «BRICS. Զարգացման բանկ» անվանումը, և որի կենտրոնակայանը Շանհայում էր: Ներկայում դա կոչվում է «Նոր զարգացման բանկ» (ՆԶԲ)[5] և ունի հետևյալ գերագույն նպատակը. կազմակերպության անդամների համար հնարավորինս թափանցիկ ու ամբողջական վերահսկելի դարձնել կառույցի զարգացման ֆինանսավորման գործընթացը՝ որպես գործուն ֆինանսական այլընտրանք Վաշինգտոնի անմիջական վերահսկողության տակ գտնվող և ֆինանսական աշխարհը գերիշխող երկու կառույցներին՝ ԱՄՀ-ին և ՀԲ-ին: Սրան զուգահեռ, անդամ պետությունները 2018 թվականին հիմնադրեցին «BRICS PAY»[6] միջազգային վճարումների ապակենտրոնացված բազմարժութային թվային վճարային համակարգը, որը հնարավորություն է ընձեռում իրականացնելու փոխադարձ գործարքներ՝ առանց տեղական արժույթն ԱՄՆ դոլարի փոխարկելու անհրաժեշտության:

ԲՐԻԿՍ-ն արդեն մեր սահմանին է

2024 թվականի հունվարին Իրանի Իսլամական Հանրապետությունը դարձավ ԲՐԻԿՍ-ի լիիրավ անդամ: Հետևաբար՝ կարող ենք արձանագրել, որ տնտեսական այդ միավորումն աշխարհագրական առումով անմիջականորեն սահմանակից է Հայաստանի Հանրապետությանը: Եթե դիտարկենք ԲՐԻԿՍ-ի 10 անդամի հետ մեր տնտեսական հարաբերությունների պատ-

[5] New Development Bank (NDB), https://www.ndb.int/
[6] Decentralised multi-currency digital international payments system: BRICS PAY, https://www.brics-pay.com/

մությունը, ապա առնվազն երեքի՝ Ռուսաստանի, Հնդկաստանի և Իրանի պարագայում դա տեսանելի է: Մնացյալի դեպքում վարվում է միջպետական համագործակցության թիրախավորված քաղաքականություն, որը նոր հորիզոններ է բացում, մասնավորապես՝ Չինաստանի, ԱՄԷ-ի, Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի հետ փոխշահավետ հարաբերությունների տիրույթում: Ուստի կարող ենք ասել, որ այս կառույցի հիմնական «խաղացողների» հետ, գոնե այս պահի դրությամբ, սկզբունքորեն չունենք բացասական պատմություն: Այս իրավիճակը մեզ համար ավելի շահեկան կարող է դառնալ, եթե հաշվի առնենք նաև սահմանակից Իրանի՝ ԵԱՏՄ տնտեսական հարթակն օգտագործելու մտադրությունը:

2024 թվականի ապրիլին Հայաստանի Հ1 հեռուստաընկերության «Հարցազրույց» հաղորդման ժամանակ Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյին[7] նշեց, որ հատկապես Հայաստանի նման երկրի պարագայում՝ քաղաքական ու տնտեսական անվտանգության ապահովման առումով, անխոհեմ է «ձվերը հավաքել մեկ զամբյուղի մեջ»: Սույն թվականի մարտի 14-ին ամերիկյան հայտնի RAND ուղեղային կենտրոնի փորձագետներն իրենց վերլուծականում նմանօրինակ եզրակացություն էին կատարել[8]: Բավական ազդեցիկ երկրների վերլուծաբանների ու դիվանագետների՝ արդեն իսկ հանրայնացված այս հաղորդագրությունները վկայում են այն մասին, որ այս խառնակ ժամանակաշրջանում՝ պայմանավորված աշխարհակարգային փոփոխություններով, Հայաստանի առջև գոնե ռազմաքաղաքական ու տնտեսական կողմնորոշման տիրույթում «աշխարհակալների» կողմից չի դրվում կամ/կամ-ի ծանր ընտրության սկզբունքը, և հետևաբար՝ «մոդեռնացված» և/և-ի սկզբունքը մեր երկրի համար օբյեկտիվորեն դառնում է ամենաարդյունավետը:

Այսինքն՝ նույնիսկ օտարի աչքով է պարզ, որ Հայաստանի համար կործանարար է որևէ մեկի՝ ավագ ընկերոջ, բարեկամի/չարակամի հովանու տակ լինելը, և մեր աշխարհագրական դիրքից, ռազմաքաղաքական ու տնտեսական շահերից է բխում թե՛ անվտանգային, թե՛ տնտեսական համագործակցության ուղիների հնարավորինս դիվերսիֆիկացումը:

Այս ամենն ինչ-որ տեղ ունի պատմական/ժառանգային հիմնավորում, որի կարևոր փաստարկը Սփյուռքի՝ հայկական ցանցային աշխարհի գոյությունն է, որի հետ հաշվի էր նստում այնպիսի կարծր միակուսակցական երկիր, ինչպիսին Խորհրդային Միությունն էր: Անգամ Խորհրդային Միության գոյության ժամանակահատվածում Խորհրդային Հայաստանը, որպես կառույցի 15 հանրապետություններից մեկը, արտոնություն ուներ արտադրատնտեսական, գիտական, մշակութային, մարզական ակտիվ շփումներ ունենալ ոչ սոցիալիստական գաղափարախոսությամբ «շնչող» այն երկրների հետ, որտեղ օսմանյան և ապա երիտթուրքական հայատյաց ցեղասպան քաղաքականության ու դրա հետևանքով հայրենազրկման պատճառով ձևավորվել էին հայկական գաղթօջախներ (ԱՄՆ, Արգենտինա, Ֆրանսիա, Լիբանան, Ավստրալիա, Եգիպտոս, Սիրիա և այլն): Այդ երկրներում հայ համայնքի բազում ներկայացուցիչներ և հայկական կազմակերպություններ ակտիվորեն՝ հավասարը հավասարի սկզբունքով, մասնակցում էին Խորհրդային Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքին (խորհրդային գաղափարախոսական մեքենայի համար շռայլություն կլիներ՝ ի շահ իրեն չօգտագործել այդ հանգամանքը):

Հատկանշական է, որ արդեն իբրև անկախ պետություն հանդես եկող Հայաստանին «աշխարհակալները» հաճախ թույլատրում են այն, ինչը մյուսների դեպքում անթույլատրելի է համարվում: Մասնավորապես՝ XX դարի վերջին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ Իրանի նկատմամբ իրականացվող տնտեսական խստագույն արգելքները չէին խանգարում, որ Հայաստանում իր անխափան կենսագործունեությունը

[7] Հարցազրույց Օլիվիե Դըկոտինյիի հետ. հանրային հեռուստատեսություն, https://www.youtube.com/watch?v=bqaBnk2e1uk
[8] The U.S. Can't Guarantee Armenia's Security, Despite Azerbaijan's Threats, but It Can Help, https://www.rand.org/pubs/commentary/2024/03/the-us-cant-guarantee-armenias-security-despite-azerbaijans.html

ծավալեր իրանական «Մելլաթ բանկը»: Ընդ որում, երկու հարևան երկրների միջև տնտեսական համագործակցությունը կայուն զարգացում էր ապրում Արցախյան գոյամարտի ժամանակահատվածում նույնպես:

Վերոթվարկյալները խորհրդային և անկախ Հայաստանի արտաքին հարաբերությունների իրական ու հաջողված պատմություններ են, որոնց տրամաբանական շարունակությունը կարող է լինել Իրանի միջոցով դեպի ԲՐԻԿՍ-ի խոշորագույն անդամների՝ Հնդկաստանի և Չինաստանի հետ լոգիստիկ կապերի ու նոր ուղիների կառուցման ռազմավարությունը: Այս համատեքստում անհրաժեշտ է ակտիվացնել մասնակցայնության չափաբաժինն այնպիսի խոշոր տնտեսական ծրագրում, ինչպիսին է Իրանի հարավ-արևելքում՝ Օմանի ծոցի ափին գտնվող «Չաբահար» նավահանգիստը շահագործելու մասին իրանա-հնդկական «մեգանախագիծը», որի շրջանակում 10 տարվա համաձայնագիր է կնքվել India Ports Global Ltd. & Ports և Իրանի ծովային կազմակերպության միջև[9]: Այս համաձայնագիրը, որի գաղափարի ու նախագծի մշակման ակունքները մեզ տանում են 2003 թվական, ուշագրավ է նրանով, որ դա փաստացիորեն առաջին դեպքն է, երբ Հնդկաստանն իր երկրի սահմաններից դուրս ստանձնում է օտար երկրում նավահանգստի կառավարումը: Միաժամանակ, հաշվի առնելով երկու երկրների բարիդրացիական հարաբերությունները Հայաստանի Հանրապետության հետ, անհրաժեշտ է մշակել հստակ ռազմավարություն «Չաբահարի» նավահանգստում մասնակցայնության արդյունավետ կառուցակարգերի ստեղծման, կայունացման ու շարունակական բարելավման ուղղությամբ, ինչի մասին բարձրաձայնել է պաշտոնական Իրանը՝ Հայաստանում իր դեսպանատան միջոցով: Մասնավորապես՝ ԻԻՀ դեսպան Մեհդի Սոբհանին մամուլի ասուլիսի ժամանակ խոսել է «Չաբահար» նավահանգստում Հայաստանի կողմից ներկայացուցչություն բացելու հնարավորության մասին: Միաժամանակ, խնդրին անդրադարձել է նաև հնդկական կողմը, որն էլ Հայաստանում իր դեսպանի միջոցով ուղղակիորեն առաջարկել է ներկայացնել գործնական ճանապարհային քարտեզ այդ ծրագրի «պտուղներից» արդյունավետ կերպով օգտվելու համար[10]: Հասկանալի է, որ իրանա-հնդկական այս համագործակցությունը ևս մեկ հեռանկարային քայլ է ԲՐԻԿՍ-ի կառույցն ամրապնդելու և դրանում տարածաշրջանի նոր երկրների մուտքն ապահովելու համար:

ԲՐԻԿՍ-ը նոր իրողություններում համաշխարհային տնտեսության փոխշահավետ համագործակցության մտադրությունների «լակմուսն» է, որը հնարավորություն է տալիս դեպի բազմաբևեռ աշխարհ գնացող, տնտեսական կայուն առաջընթաց ապահովող երկրներին նույնպես հայտնվելու «խաղասեղանի» շուրջ:

Հայաստանը, սահմանակից երկու ոչ բարեկամ երկրների (Ադրբեջան, Թուրքիա) անառողջ նկրտումներն ու ներդաշնակեցված հակահայ քայլերը չեզոքացնելու կամ սեփական շահի տեսանկյունից դրանց հակազդելու առումով, պետք է փնտրի այլընտրանքային ելքեր՝ հնարավորինս իր դիրքերն ամրապնդելու համար: Այս գերխնդիրը հաջողությամբ լուծելու նպատակով անհրաժեշտ է մշակել նոր, իրատեսական սցենարներ՝ ստեղծելու բազմավեկտոր ու դիվերսիֆիկացված անվտանգային համակարգ:

ԲՐԻԿՍ-ի և ՇՀԿ[11]-ի տնտեսական ակտիվացումը հատկապես տարածաշրջանային լոգիստիկ քաղաքականության հստակեցման համատեքստում թույլ է տալիս եզրակացնել, որ բազմաբևեռության ուղին բռնած նոր աշխարհաքաղաքական իրողություններում Հայաստանը պետք է հնարավորինս տրամաբանական և կանխատեսելի կերպով դիրքավորվի, ինչը նշանակում է հատկապես ռազմաքաղաքական ու տնտեսական տեսանկյունից կարևորել այնպիսի երկրների հետ հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը, ինչպիսիք են Իրանը, Չինաս-

[10] Չաբահար նավահանգստից օգտվելու հարցում Հնդկաստանը սպասում է Հայաստանի առաջարկներին. դեսպան Նիլակշի Սահա Սինհա, https://www.tert.am/am/news/2024/05/17/armenia-india/4125457

[11] ՇՀԿ – Շանհայի համագործակցության կազմակերպություն:

տանը, Հնդկաստանն ու Ծոցի երկրները: Արտաքին քաղաքականություն վարելու հենց այդպիսի սկզբունքի մասին բարձրաձայնեց նաև ամերիկացի հայտնի դիվանագետ Էդվարդ Ջերեջյանը[12] «Մեդիամաքս» լրատվական կայքին տված հարցազրույցում՝ մատնանշելով Հայաստանի անվտանգային դիվերսիֆիկացման հիմնական սկզբունքները[13], որոնց կիրառումը, ինչ խոսք, Հայաստանից պահանջելու են լուրջ մարտահրավերներին դիմակայելու մանրակրկիտ հաշվարկված քաղաքականության մշակում և ապա դրա անթերի իրականացում: Որպես ռազմավարական սկզբունք՝ պետք է ընտրվի փոքր, բայց հաստատուն քայլերով առաջ ընթանալու արվեստը, որը ենթադրում է, արագ փոփոխվող աշխարհի մարտահրավերներին զուգահեռ, մշակել և «ձեռքի տակ» ունենալ մեր նախանշած նպատակի իրագործման բազում սցենարներ: Հատկապես այսօր, երբ, անկախ տարաբնույթ պատերազմներից ու բախումներից, համաշխարհային տնտեսությունը շարունակում է թելադրել «մեծ խաղի» կանոնները, պետք է առաջնորդվել պարզ ու «աշխատող» մի սկզբունքով, այն է՝ ձգտել, նախ և առաջ, ունենալ ոչ թե լրացուցիչ 100 դրամ, այլ 100 վստահելի բարեկամ...

[12] Էդվարդ Պիտեր Ջերեջյան՝ հայազգի ամերիկյան դիվանագետ, որը ծնվել է 1939 թ. մարտի 6-ին՝ Նյու Յորքում (ԱՄՆ): Ծառայել է ԱՄՆ ութ վարչակազմերում՝ սկսած Ջոն Ֆ. Քենեդուց մինչև Քլինթոնի նախագահության ժամանակահատվածը (1962-1994 թթ.): Եղել է նախագահ Ռոնալդ Ռեյգանի հատուկ օգնականը և ԱԳՆ մամուլի քարտուղարի տեղակալը (1985-1986 թթ.), ԱՄՆ պետքարտուղարի օգնականը՝ մերձավորարևելյան հարցերով (1991-1993 թթ.): 1988-1991 թթ. և 1993-1994 թթ., համապատասխանաբար, Սիրիայում և Իսրայելում եղել է ԱՄՆ դեսպան: Ջեյմս Ա. Բեյքեր III հանրային քաղաքականության ինստիտուտի տնօրենն է Ռայսի համալսարանում, Ամերիկյան արվեստի և գիտության ակադեմիայի անդամ, ինչպես նաև Նյու Յորքի Քարնեգի կորպորացիայի հոգաբարձուների խորհրդի անդամ:

[13] Էդվարդ Ջերեջյան. Պուտինին Կովկասում քաղաքական պետք չէ, https://mediamax.am/am/news/interviews/18130/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Էդվարդ Ջերեջյան. Պուտինին Կովկասում քաղաքական պետք չէ, https://mediamax.am/am/news/interviews/18130/
2. Հարցազրույց Օլիվիե Դրկոտինյիի հետ. Հանրային հեռուստատեսություն, https://www.youtube.com/watch?v=bqaBnk2e1uk
3. Հնդկաստանը «Չաբահար» նավահանգստի կառավարման համաձայնագիր է ստորագրել Իրանի հետ, https://arm.sputniknews.ru/20240513/hndkastany-chabahar-navahangsti-karavarman-hamadzajnagir-e-stvoragrel-irani-het-75692199.html
4. О неформальном межгосударственном объединении БРИКС, http://brics2015.ru/russia_and_brics/20150301/15574.html
5. Decentralised multi-currency digital international payments system: BRICS PAY, https://www.brics-pay.com/
6. New Development Bank (NDB), https://www.ndb.int/
7. The U.S. Can't Guarantee Armenia's Security, Despite Azerbaijan's Threats, but It Can Help, https://www.rand.org/pubs/commentary/2024/03/the-us-cant-guarantee-armenias-security-despite-azerbaijans.html
8. Visualizing the BRICS Expansion in 4 Charts, https://www.visualcapitalist.com/visualizing-the-brics-expansion-in-4-charts/

Амазасп ГАЛСТЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

ГЕОЭКОНОМИЧЕСКАЯ ХРОНИКА

БРИКС. ПРЕЛЮДИЯ МНОГОПОЛЯРНОГО МИРА

БРИКС — неофициальная группа стран, которая по своей структуре считается межправительственной организацией. По сути, это объединение стран, выступающих за многополярный мировой порядок, основными странами-опорщиками которого являются Бразилия, Россия, Индия, Китай и ЮАР, а аббревиатура первых букв латинских названий этих стран стала названием

организации. Консолидация этих стран не случайна, поскольку они являются авангардом стран, зафиксировавших быстрое развитие в начале XXI века. Они понимают, что при сохранении таких тенденций роста можно стать игроками, диктующими правила игры в процессах глобальной экономики.

На своем первом саммите в 2009 году они активно подтвердили свою приверженность многополярному мировому порядку и призвали к созданию новой глобальной резервной валюты, которая заменит доллар США, что обеспечит большую экономическую и геополитическую интеграцию, координацию и финансовый контроль между государствами-членами БРИКС.

БРИКС в экспертном поле обычно понимают как попытку сформировать новый геополитический полюс, который с определенного момента сможет уравновесить доминирующее влияние Запада на мировую экономику через такие финансовые структуры, как Международный валютный фонд (МВФ) и Всемирный банк (ВБ).

Однако следует также учитывать, что рассматривать эту структуру как реальную консолидированную единицу перечисленных выше стран весьма условно, особенно рассматривая ее в контексте их лидерских устремлений. В настоящее время к пятерке присоединились и стали полноправными членами организации еще четыре: Иран, Объединенные Арабские Эмираты, Египет и Эфиопия, а также есть около 4 десятков стран, желающих присоединиться, часть которых уже находится на стадии практических переговоров. Статья носит познавательный характер и вписывается в логику реализации диверсифицированной политики экономической безопасности Армении.

Ключевые слова: *БРИКС, межправительственная организация, многополярный мир, мировая экономика, экономическая безопасность*

Hamazasp GALSTYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics

GEOECONOMIC CHRONICLE

BRICS: PRELUDE TO A MULTIPOLAR WORLD

BRICS is an informal group of countries that, due to its structure, is considered an intergovernmental organization. In essence, this is an alliance of countries that advocate for a multipolar world order, the main supporting countries of which are Brazil, Russia, India, China and South Africa, and the abbreviation of the first letters of the Latin names of these countries became the name of the organization. The consolidation of these countries is not coincidental, since they have been at the forefront of rapid development since the early XXI century. They realize that if such growth trends continue, they can become players dictating the rules of the game in the processes of the global economy.

At their first summit in 2009, the BRICS countries vigorously reaffirmed their commitment to a multipolar world order and called for the creation of a new global reserve currency to replace the US dollar, allowing for greater economic and geopolitical integration, coordination and financial control among member states.

In the expert community BRICS is usually viewed as an attempt to form a new geopolitical pole, capable of balancing the dominant influence of the West on the global economy through financial structures such as the International Monetary Fund (IMF)and the World Bank (WB).

However, it should also be taken into account that considering this structure as a real consolidated unit of the countries listed above is very conditional, especially considering it in the context of their leadership ambitions. Currently, four additional countries have joined the original five and become full members of the organization: Iran, the United Arab Emirates, Egypt, and Ethiopia Moreover, there are approximately four dozen countries wishing to join, with some already engaged in practical negotiations. The paper is educational in nature and aligns withthe logic of implementing a diversified economic security policy in Armenia.

Keywords: *BRICS, intergovernmental organization, multipolar world, world economy, economic security*